5. Создание новых технологий и их освоение.
6. Мониторинг задеированных больших и малых стран и др.

С учетом изложенного предлагаемые критерии периодизации НА следующие:

1. Десятилетия 1971-1991 гг. рассматривать как переходную фазу, соединяющую НА и СА, как периоды роста и процветания. Кроме того, рассмотреть сложившееся в данные годы новое понимание историчности, как вечной категории развития архитектуры.

2. Рассматривать 1990-ые годы, как десятилетие глобализации, которое стало причиной изменений в транспортной инфраструктуре, ландшафте и городском планировании.

3. Этап закрепления архитектурных научных исследований, как логики представленной в устойчивых направленностях (вернакулярность, экология, энергосбережения, экологическое устойчивое и т.д.).

4. НА является этапом, характеризующимся обязательной компьютерной

оснащенностью.

5. Этап освоения цифровых и нано технологий и т.д.

KERTMENJIAN DAVID

IA NAS RA, NUACA,

Doctor of Architecture, Professor, dakertmenjyan@gmail.com

PERIODIZATION PARAMETERS OF CONTEMPORARY ARCHITECTURE (Summary)

Key words: *architecture, periodization, renaissance, baroque, classicism, modern Armenian architecture.*

The Contemporary Architecture (CA) is the last phase of architectural history, which relevantly starts within 21st century nowadays. As usual, the CA bases on the last period, which is relevant to Modern Architecture (MA) from 20th century. Of course without excluding the fact that CA could be accepted as the continuation of MA simultaneously. However the alterations of last decades dictated to look to the problem in another way also, which required the recall of historicity as Postmodern and DE constructivist philosophies instead of monotony created by “International Style” and “Hi-tech” attitudes of “Universal Modern” prevailed. Of course, this overthrow the cognitions of the period more urgently, considering the climate changes occurred on the planet.

The aim of presented study is the systematization of CA periodization parameters. Scientific objectives are analysis of preconditions of CA. The method of the study conducts following undertakings (in either World or Armenian Architecture):

1. listing of existing and newly created buildings,
2. realization of sustainability trends because of climate change on the Earth,
3. classification of new styles created,
4. classification of architectural equipment means and systematization of their fields,
5. Monitoring of architectural activities of small and developed countries etc.

According to above-mentioned factors, the periodization parameters of the CA architecture are as followings:

1. 1971-1991 is a transition period between MA and CA. Where should be declared that historicity is a perpetual category for future architecture as general.

2. 1990-ies is a globalization decade affecting on transportation infrastructures, landscape and town-planning properties.

3. Fixation of “architecture in research method” as a sustainable logic development period, which include the Vernacular architecture, Ecology, Energy conservation, sustainability trends etc.

4. CA styles are relevant to CAD equipment.

5. CA required Numerical and Nano technologies too.

ԹԱՆԳԱՐԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

МУЗЕОЛОГИЯ

MUSEOLOGY

**ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՍՊԱՍՔԻ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ
ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
(Ամփոփում)**

Քանալի բառեր՝ եկեղեցական ծես, արարողակարգային սպասք, թանգարանային առարկա, ցուցադրություն, հոգևոր կենցաղ, սկիհ, խնկաման, պատկերագրություն, մշակութային արժեք:

Եկեղեցական սպասքի թանգարանային ցուցադրությունները ուսումնասիրելիս արձանագրել ենք մի քանի կարևոր նկատառում՝ կապված ցուցադրական համալիրների կառուցվածքի և էքսկուրսիաների ընթացքում եկեղեցական սպասքի մասին բանավոր տեղեկատվության փոխանցման վերաբերյալ: Հարկ է նշել, որ արարողակարգային սպասքի առանձին ցուցադրական համալիրներ թանգարաններում գրեթե չկան, ինչը հիմնականում բացատրվում է մի քանի պատճառով:

1. Թանգարանը չունենալով եկեղեցական սպասքի բավարար քանակ, չունի նաև այն առանձին համալիրով ցուցադրելու հնարավորություն:

2. Կապված թանգարանի բնույթի և ցուցադրության հայեցակարգի բովանդակության հետ:

3. Զննարկվող թեմայի կամ որոշակի առարկայի վերաբերյալ տեղեկատվության պակաս, ինչը հանգեցնում է բանավոր խոսքի կառուցման խնդրի:

Վերը թվարկված պատճառների առկայության պարագայում եկեղեցական սպասքի առարկաները ցուցադրվում են առօրյա կենցաղային առարկաներին զուգահեռ, արհեստները (արծաթագործություն, պղնձագործություն) ներկայացնող ցուցադրական համալիրներում՝ որպես արհեստագործական արտադրանք: Իհարկե, ամենևին սխալ չհամարելով եկեղեցական սպասքի արհեստագործական արտադրանք լինելու փաստը, համաձայն ենք, որ այսպիսի ցուցադրական համալիրները հանգեցնում են մի շատ կարևոր խնդրի՝ արարողակարգային սպասքի գործառույթի ոչ ճիշտ ընկալման:

Իմի բերելով կատարված ուսումնասիրության արդյունքները, ընդգծենք, որ թանգարանային առարկա հանդիսացող եկեղեցական սպասքը կարիք ունի համակողմանի ուսումնասիրության, ինչը կխթանի թանգարաններում ունենալ այնպիսի ցուցադրություններ, որտեղ այցելուն հնարավորություն կունենա ծանոթանալ ծիսական սպասքի կենցաղում ունեցած

գործառույթին, կիրառական առանձնահատկություններին, ծիսապաշտամունքային նշանակությունը:

АВETИCЯН МЕРИ

НМЭА,

Магистр, meryavetisyan1984@gmail.com

МУЗЕЙНЫЕ ЭКСПОЗИЦИИ ЦЕРКОВНОЙ УТВАРИ (Резюме)

***Ключевые слова:** церковный обряд, церемониальная утварь, музейный предмет, экспозиция, духовный быт, чаша для причастия, кадильница, иконография, культурная ценность.*

При изучении музейных выставок церковной утвари мы зафиксировали несколько важных соображений относительно строения выставочных комплексов и передачи устной информации о церковной утвари во время экскурсий. Стоит отметить, что отдельных выставочных комплексов, посвященных церемониальной утвари, в музеях практически нет, что объясняется в основном несколькими причинами:

Музей, не имея достаточного количества церковной утвари, не имеет также возможности выставлять ее в виде отдельного комплекса.

В связи с характером музея и содержанием концепции экспозиции.

Недостаток информации по рассматриваемой теме или определенному предмету, что приводит к проблеме построения устной речи.

По перечисленным выше причинам предметы церковной утвари выставляются наряду с бытовыми предметами быта, в демонстрационных комплексах, представляющих ремесла (ювелирное дело, медное дело), как ремесленные изделия. Конечно, вовсе не считая ошибочным факт, что церковная утварь является ремесленной продукцией, согласимся, что подобные выставочные комплексы приводят к очень важной проблеме - неправильному восприятию функции церемониальной утвари.

Подводя итоги проведенного исследования, подчеркнем, что церковная утварь, являющаяся музейным предметом, нуждается в всестороннем изучении, в результате чего в музеях можно будет иметь такие экспозиции, где посетитель будет иметь возможность ознакомиться с функцией ритуальной утвари в быту, прикладными особенностями, ритуально-культовым значением.

AVETISYAN MARY

NMEA,

Master, meryavetisyan1984@gmail.com

MUSEUM EXHIBITIONS OF CHURCH UTENSILS

(Summary)

Keywords: *church rite, ceremonial utensils, museum item, exposition, spiritual lifestyle, communion cup, censer, iconography, cultural value.*

When we have made studying museum exhibitions of church utensils, several important remarks related to the structure of the exhibition sets and the verbal information given on church utensils during the excursions. It should be noted, that practically there are no separate exhibition sets of ceremonial utensils in museums, which is mainly explained by a number of reasons, including the following:

The museum, not having a sufficient amount of church utensils, does not have an opportunity to exhibit it as a separate set, either.

Because of the nature and content of the exhibition conception of the museum. The lack of information on the topic under discussion or a specific object, which causes a problem in the construction of oral speech.

Because of the above-mentioned reasons, the church utensils are exhibited along with the items of everyday use in exhibition complexes representing crafts (silversmithing, coppersmithing) as handicrafts. Without considering it wrong that the church utensils are handicrafts, we believe that such exhibition sets cause quite an important problem, i.e. a misperception of the function of ceremonial utensils.

Summing up, it should be emphasized, that church utensils of the museum collection need a comprehensive study, which will contribute to hold such exhibitions in museums, where the visitor will have an opportunity to get acquainted with the function of ceremonial utensils in everyday life, the peculiarities of their use and ritual significance.

**ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ
ԱՊԱՅՈՎՈՂ ԳԻՏԱԿԱՆ ԴԻՍՑԻՊԼԻՆ
(Սեղմագիր)**

Քանալի բառեր՝ Թանգարանային մանկավարժություն, հոգեբանա-մանկավարժական ազդեցություն, թանգարանային լսարան, անձի ստեղծագործական ունակությունները, տարբերակված մոտեցում, թանգարանային մանկավարժների նախապատրաստում:

Այսօր դժվար է պատկերացնել հանրային կրթամշակութային սպասարկման համակարգն առանց թանգարանի, ուստի և առանց իրավասու, բանիմաց մասնագետների, ովքեր լավատեղյակ են թանգարանային կրթական ծրագրերի իրականացման առանձնահատկություններին:

Թանգարանային մանկավարժությունը գիտական դիսցիպլին է, որը կարճ ժամանակի ընթացքում դարձավ ուսուցման առարկա ողջ աշխարհում, այն գտնվում է թանգարանային գործի, մանկավարժության և հոգեբանության տիրույթում, որտեղ թանգարանը դիտարկվում է որպես կրթական համակարգի բաղկացուցիչ և ապահովում է կրթական ծրագրերի իրականացում: Այն որպես գիտության բնագավառ, ունի կատեգորիաների և հասկացությունների իր համակարգը և ուսումնասիրության ուղղությունները, որոնք դիտարկված են հոդվածում: Թանգարանների կրթական գործունեության զարգացման ընթացքում առաջացավ ոլորտի մասնագետներ՝ թանգարանային մանկավարժներ նախապատրաստելու խնդիրը: Իս. Աբովյանի անվան Հայկական Պետական Մանկավարժական համալսարանի Թանգարանագիտության բաժնում 2001 թ. պատրաստում են նաև թանգարանային մանկավարժներ:

ГРИГОРЯН АЛВАРД

АГПУ,

Канд. педаг. наук, доцент, aspumuseum@gmail.com

**МУЗЕЙНАЯ ПЕДАГОГИКА КАК НАУЧНАЯ ДИСЦИПЛИНА,
ОБЕСПЕЧИВАЮЩАЯ РЕАЛИЗАЦИЮ МУЗЕЙНЫХ
ОБРАЗОВАТЕЛЬНЫХ ПРОГРАММ
(Резюме)**

Ключевые слова: музейная педагогика, психолого-педагогическое воздействие, музейная аудитория, дифференцированный подход, особенности музейного педагогического воздействия, творческие способности личности, подготовка музейных педагогов.

Сегодня сложно представить систему государственных образовательных и культурных услуг без музея, а значит, без грамотных, знающих специалистов, хорошо знающих специфику реализации музейных образовательных программ.

Музейная педагогика – научная дисциплина, которая за короткое время стала предметом изучения во всем мире. Именно в области музейного дела, педагогики, психологии музей рассматривается как составная часть образовательной системы, обеспечивает реализацию образовательных программ. Как область науки она имеет свою систему категорий, понятий и направлений изучения, которые рассматриваются в статье. В ходе развития образовательных программ в музеях возникла задача подготовки специалистов в области музейной педагогики. Армянский государственный педагогический университет имени Х. Абовяна с 2001 года осуществляет подготовку музейных педагогов на кафедре Музейного дела.

GRIGORYAN ALVARD

ASPU,

PhD, Associate Professor, aspumuseum@gmail.com

**MUSEUM PEDAGOGY AS A SCIENTIFIC DISCIPLINE
THAT ENSURES THE IMPLEMENTATION
OF MUSEUM EDUCATIONAL PROGRAMS
(Summary)**

***Key words:** Museum pedagogy, psycho-pedagogical influence, museum audience, differentiated approach, peculiarities of the museum's pedagogical influence, creative abilities of a person, preparation of museum pedagogues.*

Today, it is difficult to imagine a system of public educational and cultural services without a museum, and therefore without competent, knowledgeable specialists who are well aware of the specifics of the implementation of museum educational programs.

Museum pedagogy is a scientific discipline that has quickly become a subject of study all over the world. It is in the field of museum work, pedagogy, psychology, where the museum is considered as a component of the educational system, ensures the implementation of educational programs. As a field of science, it has its own system of categories, concepts, and directions of study, which are considered in the article. During the development of the educational activity of the museums, the task of training specialists in the field of museum pedagogues arose. Armenian State Pedagogical University after Kh. Abovyan has been training museum pedagogues since 2001 in the Department of Museum Studies.

**ՀԱՅ ՏՊԱԳԻՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ
ԽՆԴԻՐՆԵՐԸ ՍՓՅՈՒՌՔՈՒՄ
(Սեղմագիր)**

Բանալի բառեր՝ հայ տպագրություն, մշակութային ժառանգություն, թվայնացում, մատենագիտություն, հայերեն տպագիր գրքեր և պարբերականներ, հավաքածուներ, տպագիր ժառանգության պահպանում:

Հայ տպագրության պատմությունը փաստում է, որ տպագիր ժառանգության մի ստվար հատվածը հանգրվանել է բուն Հայաստանի Հանրապետության սահմաններից դուրս՝ աշխարհի ամենատարբեր երկրների գրադարաններում կամ անհատների անձնական հավաքածուներում: Այդ տպագիր ժառանգության հայտնաբերումն ու պահպանումն այսօր գերակա խնդիր է համարվում:

Արտերկրում հայ տպագիր ժառանգության պահպանության ուղղությամբ անհրաժեշտ է.

ա. Իրականացնել որոնողական աշխատանքներ՝ ավանդական և առցանց տարբերակներով: Որոնողական աշխատանքները պսակվում են հաջողությամբ, քանի որ ներկայումս՝ համընդհանուր թվայնացման և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման ժամանակաշրջանում, աշխարհի բոլոր խոշորագույն գրադարանները թվայնացնում են գրքերը. դրանց մեջ առկա են նաև հայերեն տպագրություններ: Սակայն միայն թվայնացումը բավարար չէ պատկերն ամբողջացնելու համար, քանի որ դեռևս կան երկրներ (օրինակ՝ Թուրքիան), որոնք չեն հանրայնացնում իրենց գրադարանային հավաքածուները: Անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրություններ կատարել տեղում՝ հաղթահարելով տվյալ երկրների կողմից առաջացրած օրենսդրական կամ արհեստածին այլ խոչընդոտները:

բ. Ցուցակագրել հայերեն տպագիր գրքերն ու պարբերականները, հնարավորության դեպքում կազմել մատենագիտական ցանկեր: Առ այսօր արված ուսումնասիրությունները փաստում են, որ կան հայերեն գրքեր և պարբերականներ, որոնք չեն ներառվել հայ գրքի և պարբերական մամուլի համահավաք մատենագիտական ցանկերում, քանի որ չեն եղել այն հնարավորությունները, որոնք կան այսօր: Որոշ գրադարաններ կամ հավաքածուներ ունեն նմանատիպ ցանկեր, սակայն դրանք կազմված են սխալներով: Մինչդեռ յուրաքանչյուր գրադարանի կամ հավաքածուի հայերեն գրքերի ու պարբերականների ցուցակավորումը հնարավորություն

կտա ամրագրելու, թե որքան է կազմում այդ տպագիր ժառանգությունը, ինչ վիճակում է գտնվում և ինչքանով է հայտնի հայ և օտարազգի հետազոտողին:

գ. Ուսումնասիրել հատկապես Սփյուռքի տարբեր օջախներում պահվող անձնական հավաքածուները: Զաղաքական, պատմական, հասարակական տարբեր պատճառներով հայ տպագիր ժառանգության արժեքավոր մի հատվածը հանգրվանել է մասնավոր հավաքածուներում, որտեղ չկան պահպանության ճիշտ պայմաններ և համապատասխան ցուցակներ: Անհրաժեշտ է ուսումնասիրել, հայտնաբերել նմանատիպ հավաքածուները, գրանցել դրանք, որպեսզի հետագայում հնարավոր լինի վերահսկել այդ հավաքածուների շարժը:

դ. Կազմակերպել վտանգված հավաքածուների տեղափոխումը Հայաստանի Հանրապետություն: Փաստ է, որ հատկապես այն պետություններում, ուր վերջին տասնամյակներում պատերազմների պատճառով հայերը ստիպված են եղել լքել երկիրը, պատերազմական գոտում են հայտնվել բազմաթիվ հայերեն տպագիր գրքեր և պարբերականներ, որոնց մեջ առկա են նաև եզակի հրատարակություններ: Նմանատիպ գրքերի ճակատագիրն այսօր անհայտ է կամ վտանգված: Նրանց տեղափոխումը հայրենիք հրատապ է, քանի որ կորուստն անդառնալի կարող է լինել:

ե. Լուծել օրենսդրական և հարկային այն բոլոր խոչընդոտները, որոնք առաջանում են տեղափոխման ժամանակ: Բացի վտանգված հավաքածուներից, Սփյուռքում կան նաև անհատներ, որոնք ունեն անձնական եզակի հավաքածուներ, պատրաստ են նվիրել հայաստանյան գրադարաններին, սակայն տեղափոխման հետ կապված առաջանում են օրենսդրական և ֆինանսական լրացուցիչ խնդիրներ, որոնց լուծումը հնարավոր է միայն պետական աջակցության շնորհիվ:

Կարծում ենք՝ Սփյուռքում հայերեն տպագիր ժառանգության հայտնաբերումն ու պահպանումը հնարավոր է միայն անհատների, տարբեր կառույցների և պետության համատեղ ջանքերի շնորհիվ:

**ПРОБЛЕМЫ СОХРАНЕНИЯ АРМЯНСКОГО ПЕЧАТНОГО
НАСЛЕДИЯ В ДИАСПОРЕ
(Резюме)**

***Ключевые слова:** Армянское книгопечатание, культурное наследие, оцифровка, библиография, армянские печатные книги и периодические издания, коллекции, сохранение печатного наследия.*

История армянского книгопечатания свидетельствует о том, что большая часть печатного наследия сохранилась за пределами самой Республики Армения, в библиотеках различных стран мира или в частных коллекциях отдельных лиц. Поиск и сохранение этого печатного наследия сегодня считается приоритетом.

Чтобы защищать армянское печатное наследие за рубежом, нужно:

а. Проводить поиск с традиционными и онлайн методами. До сих пор поисковые работы увенчались успехом, потому что в настоящее время, в эпоху всеобщей оцифровки и развития информационных технологий, все крупнейшие библиотеки мира занимаются оцифровкой книг: среди них есть и армянские печатные книги. Однако одной лишь оцифровки недостаточно для полноты картины, поскольку всё ещё есть страны (например, Турция), которые не делают свои библиотечные фонды общедоступными. Необходимо проводить исследования на местах, преодолевая законодательные или иные искусственные препятствия, создаваемые этими странами.

б. Составить список армянских печатных книг и периодических изданий, также, по возможности, составить библиографические списки. Проведенные до сих пор исследования подтверждают наличие армянских книг и периодических изданий, которые не были включены в объединенные библиографические списки армянских книг и периодических изданий, поскольку не имели тех возможностей, которые существуют сегодня. В некоторых библиотеках или коллекциях есть подобные списки, но они составлены с ошибками. Однако, составление списков армянских книг или периодических изданий каждой библиотеки или коллекции даст возможность определить число этих печатных наследии, то в каком они состоянии и насколько хорошо они известны армянским и зарубежным исследователям.

в. Изучение частных коллекций, хранящиеся в различных центрах

диаспоры. В силу различных политических, исторических и социальных причин, ценная часть армянского печатного наследия оказалась в частных коллекциях, где нет надлежащих условий для их хранения и соответствующих списков. Необходимо изучать, выявлять похожие коллекции, регистрировать их, чтобы потом можно было контролировать движение этих коллекций.

д. Организовать передачу находящихся под угрозой исчезновения коллекций в Республику Армения. Это факт, что особенно в тех государствах, где армяне были вынуждены покинуть страну из-за войн в последние десятилетия, в зоне боевых действий остались много армянских печатных книг и периодических изданий, среди которых есть и уникальные издания. Судьба подобных книг сегодня неизвестна или находится под угрозой. Их перевозка на родину является срочной, так как утрата может быть необратимой.

е. Устранение всех юридических и налоговых препятствий, возникающих при перевозке. Помимо коллекций, которые под угрозой исчезновения, в Диаспоре есть и люди, имеющие уникальные личные коллекции, которые готовы пожертвовать армянским библиотекам, но в связи с перевозкой возникают дополнительные юридические и финансовые проблемы, решение которых возможно только благодаря государственной поддержке. Мы считаем, что обнаружение и сохранение армянского печатного наследия в Диаспоре возможно только благодаря совместным усилиям отдельных лиц, различных структур и государства.

GRIGORYAN MAYA

MMSHE,

PhD (Philology), grigoryan_maya@mail.ru

PROBLEMS OF PRESERVATION OF ARMENIAN PRINTED HERITAGE IN THE DIASPORA

Keywords: *Armenian Printing, Cultural Heritage, Digitization, Bibliography, Armenian Printed Books and Periodicals, Collections, Preservation of Printed Heritage.*

The history of Armenian printing documents that a large part of the printed heritage has been preserved outside the borders of the Republic of Armenia itself, in the libraries of various countries around the world or in the personal collections of individuals. Finding and preserving this printed heritage is considered a priority today.

It is necessary to protect the Armenian printed heritage abroad.

a. To conduct searches with traditional and online options. The search works are crowned with success, because currently, in the era of universal digitization and the development of information technology, all the largest libraries of the world are digitizing books; there are also Armenian prints among them. However, digitization alone is not enough to complete the picture, as there are still countries (e.g. Turkey) that do not make their library collections public. There is a need to conduct research on the ground, overcoming legislative or other artificial obstacles created by the countries in question.

b. To list Armenian printed books and periodicals, if possible compile bibliographic lists. The researches carried out so far document that there are Armenian books and periodicals that were not included in the collective bibliographic lists of Armenian books and periodicals, because they did not have the opportunities that exist today. Some libraries or collections have similar lists, but they are compiled with errors. Meanwhile, the listing of Armenian books or periodicals of each library or collection will provide an opportunity to determine how much this printed heritage is, in what condition it is and how well it is known to Armenian and foreign researchers.

c. To study especially the private collections kept in various centers of the Diaspora. Due to various political, historical, and social reasons, a valuable part of the Armenian print heritage has ended up in private collections, where there are no proper preservation conditions and appropriate lists. It is necessary to study, identify similar collections, register them so that later it is possible to control the movement of these collections.

d. To organize the transfer of endangered collections to the Republic of Armenia. It is a fact that especially in the countries where Armenians were forced to leave the country due to wars in recent decades, many Armenian printed books and periodicals appeared in the war zone, among which there are also unique editions. The fate of similar books today is unknown or at risk. Their repatriation is urgent, as the loss may be irreversible.

e. To resolve all legal and tax obstacles that arise during relocation. In addition to endangered collections, there are also individuals in the Diaspora who have unique personal collections, ready to donate to Armenian libraries, but additional legal and financial problems arise in connection with the transfer, the solution of which is possible only thanks to state support.

We believe that the discovery and preservation of Armenian print heritage in the Diaspora is possible only thanks to the joint efforts of individuals, various structures and of the state.

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԼԻԱՆՆԱ
ՊՍԱԹՊՄՊԾ, ՉՊՄՅ,
պատմ. գիտ. թեկնածու, դոցենտ, gip61@mail.ru

ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՏՈ ՍԿՉԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ ՈՐՈՇԱՐԿՄԱՆ ԱՌՆՉՎՈՂ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐԻ ՇՈՒՐՑ

Բանալի բառեր. ֆոտո, հավաքածու, թանգարան, ուսումնասիրություն, վկայագիր:

Համակարգչային տեխնոլոգիաների զարգացման ժամանակաշրջանում, թանգարանների կարևորագույն խնդիրներից մեկը թանգարանային առարկաների ատրիբուցիայի՝ գիտական նկարագրության միասնականացումն ու համընդհանուր չափանիշերի, ինչպես նաև տեղեկատվական միասնական շտեմարանի ստեղծումն է, որոնց բացակայությունը խոչընդոտում է միջթանգարանային տեղեկատվության փոխանակմանն ու փոխըմբռնմանը: Այդ համատեքստում կոդիտարկվի ֆոտո սկզբնաղբյուրների գիտական նկարագրության միասնական համակարգ ստեղծելու անհրաժեշտության հարցը:

Տարիներ շարունակ որոշ հետազոտողներ և թանգարանների աշխատակիցներ ֆոտո սկզբնաղբյուրները, գիտաօժանդակ բնույթի նյութ համարելով, հանդես չեն եկել դրանց ուսումնասիրման միասնական մոտեցմամբ: Ամենայն հավանականությամբ դա պայմանավորված է առարկայական նյութի առատությամբ և այն թյուր պատկերացմամբ, թե ֆոտո նյութը որպես ցուցանմուշ տեղեկատվական է, բայց ոչ գրավիչ, արտահայտիչ, զուգորդական: Սակայն, որպես սկզբնաղբյուր այն առավել օբյեկտիվ և անկողմնակալ է: Հավանաբար ֆոտո սկզբնաղբյուրների ճիշտ բաշխման հիմնական խոչընդոտներն անբավարար գիտելիքները և հավաքածուների փոքրաթիվ կատալոգներն են, ինչպես նաև թանգարանային առարկաների գիտական նկարագրության միասնական մոտեցման բացակայությունը:

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջա-վայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի հավաքածուի մեջ ընդգրկված բազմաթիվ ֆոտո սկզբնաղբյուրները գիտաճանաչողական մեծ արժեք ունեն, քանի որ հետազոտողին հնարավորություն են ընձեռում պատկերացում կազմել հայկական ճարտարապետական հուշարձանների առանձնահատկությունների, ժամանակի ընթացքում կատարված փոփոխությունների մասին: Դրանց մի զգալի մասը տարիների ընթացքում տարբեր պատճառներով կործանված, նախնական տեսքը կորցրած, կամ արմատապես փոխված կառույցների ներկայիս միակ վավերագրերն են:

Այսպիսով, տարբեր հավաքածուներում պահվող ֆոտո նյութի համակողմանի ուսումնասիրությունը կհանգեցնի միասնական դաշտեր պարունակող ընդհանուր վկայագրի ստեղծմանը, ինչը հրապարակելու դեպքում, ցանկացած պրոֆիլի հավաքածուի ֆոտո նյութը սկզբնաղբյուր կդարձնի ճարտարապետական, հնագիտական, ազգագրական, պատմական, մշակութաբանական և այլ բնույթի ուսումնասիրությունների համար:

ГЕВОРКЯН ЛИАННА

СОИСИКМЗ, АГПУ,

Канд. ист. наук, доцент, glp61@mail.ru

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ АТРИБУЦИИ МУЗЕЙНЫХ ФОТОИСТОЧНИКОВ

*Ключевые слова: фотография, коллекция, музей, исследование, па-
спорт*

В период развития компьютерных технологий одной из важнейших проблем музеев является унификация атрибуции и научного описания музейных предметов и создание стандартов, а также единой информационной базы. Отсутствие таковой затрудняет обмен межмузейной информацией. В этом контексте будет рассмотрен вопрос о необходимости создания единой системы научного описания фотоисточников. В течение многих лет некоторые исследователи и музейные работники, рассматривая фотоисточники как материал научного характера, не выработали единого подхода к их изучению. Скорее всего, это связано с обилием предметного материала и ошибочным представлением о том, что фотоматериал как экспонат информативен, но не аттрактивен, не ассоциативен, не экспрессивен, не репрезентативен. Однако как источник он наиболее объективен. Пожалуй, основными препятствиями для правильного исследования и типологизации фотоисточников являются их недостаточная изученность и малочисленность каталогов коллекций, а также отсутствие единого подхода к научному описанию музейных предметов.

Многочисленные фотоисточники, вошедшие в коллекцию ГНКО «Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников», имеют большую научную и познавательную ценность, так как дают исследователю возможность составить представление об особенностях армянских архитектурных памятников и тех видоизменениях,

которым подверглись они в течении времени. Значительная часть из них являются единственными документами тех сооружений, которые, по разным причинам, были полностью разрушены, коренным образом изменены или потеряли свой первоначальный вид.

Таким образом, всестороннее изучение хранящихся в разных коллекциях фотоисточников приведет к созданию единого паспорта, содержащего унифицированные поля, что сделает фотоматериал любой коллекции доступным источником для архитектурных, археологических, этнографических, исторических, культурологических и других исследований.

GEVORGYAN LIANNA

“SPHECMR, ASPU,

PhD, associate Doctor, glp61@mail.ru

ISSUES CONCERNING THE ATTRIBUTION OF MUSEUM PHOTO SOURCES

Keywords: *Photo, collection, museum, study, passport*

During the development of computer technologies, one of the most important problems of museums is the unification of attribution and scientific description of museum items and the creation of universal standards, as well as a unified information database, the absence of which hinders the exchange and understanding of inter-museum information. In this context, the question of the need to create a unified system of the scientific description of photographic sources will be considered. For many years, some researchers and museum workers, considering photo sources as supplementary materials, did not develop a unified approach to their study. Most likely, this is due to the abundance of the photo materials and the misconception caused by the fact that photo material as an exhibit is informative but not attractive, expressive, and coherent. However, as a source, it is more objective and unbiased.

Perhaps the main obstacles to the correct distribution of photo sources are the lack of awareness and the small number of photo catalogs, as well as the absence of a universal approach to the scientific description of museum objects. Numerous photo sources included in the “Service for the protection of historical environment and cultural museum-reservations” SNCO collection have tremendous scientific and cognitive value, as they allow the researcher to get an idea of the characteristics of Armenian architectural monuments and changes that have occurred over time. A significant part of them are the only current documents of

structures that have been destroyed, lost their original appearance, or radically changed for various reasons over the years.

Thus, a comprehensive study of photo materials stored in different collections will lead to the creation of a certificate containing unified fields, which, in case of publishing, will make the photo material of any profile collection a source for architectural, archaeological, ethnographic, historical, cultural and other types of research.

**XIX դ. ՎԵՐՋԻ - XX դ. 20-ԱԿԱՆ ԹԹ. ԼՈՒՍԱՆԿԱՐՉԱՏՆԵՐԸ
ԵՎ ՀԱՅ ԼՈՒՍԱՆԿԱՐԻՉՆԵՐԸ
(ԸՍՏ ՀԱԹ-Ի «Ֆ» ՀԱՎԱՔԱԾՈՒԻ ՆՅՈՒԹԵՐԻ)
(Սեղմագիր)**

Քանալի բառեր՝ լուսանկարչատուն, լուսանկարչություն (տաղավարային), հուշարձաններ, անվանական դրոշմ-կնիք, սովորաթղթե բլանկ, պալատական լուսանկարիչ, գեղարվեստական լուսանկար, դիմանկար, խմբանկար:

Անգնահատելի է XIX դ. մեծագույն հայտնագործության՝ լուսանկարչության դերը անցյալը և ներկան մնայուն, տեսանելի դարձնելու և ժամանակի մեջ այն փոխանցելու հարցում: XIX դ. կեսերից մինչև XX դ. կեսերի համաշխարհային արվեստի պատմության մեջ հայ լուսանկարչության ավանդը զգալի է: Պատմական տարբեր իրադարձությունների հետևանքով ու ճակատագրի բերումով հայազգի բազմաթիվ արվեստագետներ ապրել և ստեղծագործել են աշխարհի տարբեր երկրներում: Պատմականորեն դաժան ճակատագրի բերումով հայ լուսանկարիչների մի մասը ստիպված է եղել փոխել ազգանունները, թաքցնել իրենց ինքնությունը: Հայ արվեստագետ-լուսանկարիչներն ստեղծելով գեղարվեստական բարձրարժեք լուսանկարներ՝ հաճախ արժանացել են բարձրագույն գնահատականների: Նախախորհրդային Երևանում գործող անվանի լուսանկարիչներից են Գ. Թարիվերդյանցը, Մ. Դադայանցը, Ռ. Ռուբինյանը, Հ. Քյուրբչյանցը, Մ. Աղամալյանը և այլք՝ ովքեր հանդիսանում են հայ լուսանկարչության հիմնադիրները:

Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել XIX դ. վերջի - XX դ. 20-ական թթ. անվանական կնիք և գրություններ ունեցող լուսանկարչատները և հայ լուսանկարիչներին՝ ըստ ՀԱԹ-ի «Ֆ» հավաքածուի կյուրթերի: Անվանի լուսանկարիչների այդ կնիքները հանդիպում ենք լուսանկարների հակառակ երեսին: Նրանք հետաքրքիր տեղեկություններ են պարունակում լուսանկարչատների, հասցեների, մատուցվող ծառայությունների, ստացած մրցանակների և պարգևների մասին: Հայոց ազգագրության թանգարանը իր գործունեության ընթացքում հավաքել և պահպանում է ավելի քան 12000 լուսանկար (հիմնական և գիտաօժանդակ ֆոնդերը միասին, այդ թվում՝ ապակենկար, սևանկար, գունավոր սլայդ, ֆոտոժապավեն և այլն): Հավաքածուն իր մեջ ներառում է ինչպես հայազգի, այնպես էլ օտարազգի

լուսանկարիչների աշխատանքներ, այդ թվում՝ Գ. Թարիվերդյանցի, Մ. Դադայանցի, Յ. Զյուրքյանցի, Ա. Տեր-Արիստակեսյանի, Ա. Կրույրի, Դ. Երմակովի, Ա. Միչևիկի, Պ. Պապալովի, Բ. Միշչենկոյի, Է. Կլարի, Օ. Ռեևարի և այլոց լուսանկարները:

МНАЦАКАНЯН ЛУСИНЕ

НМЭА,

Магистр, mnatsakanyan.lusine@mail.ru

**ФОТОАТЕЛЬЕ И АРМЯНСКИЕ ФОТОГРАФЫ
КОНЦА XIX- 20-Х ГОДОВ XX СТОЛЕТИЯ (ПО МАТЕРИАЛАМ ИЗ
КОЛЛЕКЦИИ «Ф» МЭА)
(Резюме)**

Ключевые слова: фотоателье, кабинетный портрет, памятники, личный штамп-печать, литографический бланк, придворный фотограф, художественная фотография, портрет, групповой снимок.

Неоценима роль величайшего открытия XIX века - фотографии в увековечивании прошлого и настоящего и передаче его во времени. Значительным был вклад армянских фотографов в историю мирового искусства с середины XIX до середины XX века. В результате различных исторических событий и по воле судьбы многочисленные армянские деятели искусства жили и творили в разных странах мира. По воле исторически жестокой судьбы часть армянских фотографов была вынуждена менять фамилии, скрывать свою идентичность. Армянские искусствоведы-фотографы, создавая ценные художественные фотографии, часто удостоивались самых высоких оценок. Среди известных фотографов, творящих в досоветском Ереване, есть такие имена, как Г. Таривердянц, М. Дадаянц, Р. Рубинян, О. Кюркчянц, М. Агамалян и другие, которые являются основоположниками армянской фотографии.

Цель данной статьи- представить фотоателье и армянских фотографов конца XIX - 20-х годов XX столетия с именной печатью и надписями по материалам коллекции «Ф» МЭА. Эти печати известных фотографов встречаются на обратной стороне фотографий. Они содержат интересную информацию об адресах и услугах фотоателье, полученных ими призах и наградах. В ходе своей деятельности музей этнографии армян собрал и сохраняет более 12000 фотографий (в основных и научно-вспомогательных

фондах вместе взятых, в том числе: фотографии на стекле, позитивы и негативы, цветные слайды, фотопленки и т.д. В коллекцию включены работы как армянских, так и зарубежных фотографов, в том числе фотографии Г. Таривердянца, М. Дадаянца, Г. Кюркчянца, А. Тер-Аристамеса, А. Вруйра, Д. Ермакова, А. Мичника, П. Папалова, Б. Мищенко, Э. Клара, О. Ренара и других.

LUSINE MNATSAKANYAN

NAEM,

Master, mnatsakanyan.lusine@mail.ru

**ARMENIAN PHOTOGRAPHERS AND PHOTO WORKSHOPS
OF THE LATE 19TH AND 20'S OF THE 20TH CENTURIES
(ACCORDING TO THE MATERIALS OF THE "F" COLLECTION OF THE
ARMENIAN ETHNOGRAPHIC MUSEUM)
(Summary)**

Keywords: *photo workshop, cabinet photography, monuments, name seal, cardboard blank, court photographer, art photography, portrait, group photography*

The role of photography; one of the greatest inventions of the 19th century is inestimable in making the past and present permanent, visible and transmitting it through the time. The contribution of Armenian photography in the history of world art from the middle of the 19th century to the middle of the 20th century is significant. As a result of various historical events and due to fate, many Armenian artists lived and created in different countries of the world and some of them had to change their names and hide their national identity. Often they received highest appraisals. Some of the famous photographers working in pre-soviet Yerevan are G. Tariverdyants, M. Dadayants, R. Rubinyan, H. Kyrkchyants, M. Aghamalyan and others, who are the founders of Armenian photography.

The aim of the paper is to represent the late 19th and the 20's of the 20th century's photo workshops with name seals and inscriptions and the Armenian photographers according to the materials of the "F" collection of Armenian Ethnographic Museum. Those seals of famous photographers one can find on the reverse side of the photographs. They contain interesting information on workshop's addresses, provided services, received awards and honors. During its practice, the Armenian Ethnographic Museum has collected and keeps more

than 12,000 items of photographs (the main and scientific-auxiliary funds together, including black and white photos, negatives and positives, etc.). The collection includes works both by Armenian and by foreign photographers, including G. Tariverdians, M. Dadayants, H. Kyurkchants, A. Ter-Aristakesyan, A. Vruir, D. Ermakov, A. Michnik, P. Mishchenko, E. Clair, O. Renar and others.

**ՃԱՆԱՊԱՐՅ ԴԵՊԻ ՏԱՃԱՐ. ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ
ԲԵԿՈՐՆԵՐԻ ՆՈՒՅՆԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՉՎԱՐԹՆՈՑՈՒՄ
(Սեղմագիր)**

Բանալի բառեր՝ Չվարթնոց, հուշարձան, ճարտարապետական բեկոր, նույնականացում, հաշվառում, հանրահռչակում:

«Չվարթնոց» պատմամշակութային արգելոց-թանգարանը, որը զբաղեցնում է 14,1 հա տարածք և Հայաստանի մշակութային զբոսաշրջության ակտիվ կենտրոններից է: 2004 թ. հուլիսի 8-ից ներառված է ՀՀ Մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի համակարգում որպես մասնաճյուղ:

Համալիրը բաղկացած է տաճարից և աշխարհիկ կառույցներից (կաթողիկոսական պալատ, կենցաղային սենյակներ, բաղնիք, խաղողի հնձան, ջրհոր): Տաճարական համալիրի հարավարևելյան մասում պահպանվել են նաև V դ. միանավ եկեղեցու մնացորդներ (սեղանի բեմը, մկրտարանը և այլն): Բարձր գնահատելով տաճարի պատմաճարտարապետական արժեքը՝ 1937 թ. տաճարի հարավային կողմում, ավերակների հարևանությամբ, հիմնադրվել է թանգարան, որը մինչև XX դ. 90-ական թթ. սկիզբն ունեցել է մեկ սրահի մեջ ամփոփված փոքր ցուցադրություն: 2012 թ. թանգարանում իրականացվել է նոր ցուցադրություն: «Չվարթնոց» ՊՄԱԹ-ի մշտական ցուցադրությունն ունի թեմայի մատուցման թանգարանային և բացօթյա համադրված հատվածներ:

Տարբեր տարիներին հուշարձանի տարածքում և նրա մերձակայքում կատարված պեղումներից հայտնաբերվել են միջին (Ք.ա. XXII-XV դդ.) և ուշ (Ք.ա. XV-XII դդ.) բրոնզի շրջափուլերի դամբարանային նյութեր, անտիկ դարաշրջանի (Ք.ա. VI-III դդ.) նյութական մշակույթի մնացորդներ, միջնադարյան (IV-XIV դդ.) խեցեղեն, խճանկարի մնացորդներ, շրջանակի մեջ քանդակված քառաթև խաչ, հունարեն և հայերեն արձանագրություններ, մարդու դիմաքանդակ, կենցաղային ու ծիսական սպասք, պերճանքի առարկաներ և այլն: Ելնելով այս եզակի հուշարձանի պահպանության, նպատակային ու հեռանկարային զարգացման պահանջներից՝ 2002 թ. իրականացվել է «Չվարթնոց» տաճարի բեկորների հետազոտում, չափագրում

և անձնագրավորում (հեղինակային խմբի ղեկավար՝ ճարտարապետ Մերի Դանիելյան, գիտական խորհրդատու՝ ճարտարապետության դոկտոր Տիրան Մարուքյան): Ծրագրի ընթացքում՝ ըստ հերթական համարների, չափագրվել և հետազոտվել են 2023 բեկոր և 30 բեկոր՝ գծիկ համարներով: Բեկորների ընդհանուր թվաքանակը կազմում է 2053 բեկոր: Կազմվել են համակարգչային անձնագրեր, որոնցից յուրաքանչյուրը պարունակում է բեկորի բնութագրումը, մաքրագիր գծագիրը և լուսանկարը:

«Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի աշխատակիցների ջանքերով 2020 թ. սկսվել (ընդհատվել է համավարակի պատճառով) և 2022 թ. մարտի 29-ից մինչև մայիսի 27-ը շարունակվել են ճարտարապետական բեկորների նույնականացման և հաշվառման աշխատանքները՝ հիմք ընդունելով 2002 թ. բեկորների բնութագրման լազերային սեղմասկավառակներում զետեղված լուսանկարներն ու գծագրերը: Նույնականացվել և հաշվառել է 1820 ճարտարապետական բեկոր:

Զեկույցի նպատակն է բացօթյա տարածքում, ինչպես նաև թանգարանի ֆոնդերում պահվող բացառիկ ճարտարապետական մանրամասերի հանրահռչակումը, աշխատանքի ընթացքում առաջացած խնդիրների պարզաբանումը, ամբողջությամբ նույնականացման, մաքրման և մասնակի վերականգնման աշխատանքներից հետո ժամանակակից պայմաններին համահունչ ցուցադրության նախապատրաստումը՝ թանգարանի մշտական ցուցադրությունը լրացնելով և ամբողջացնելով հուշարձանի քանդակագործման արվեստին, ճարտարապետական, ծավալատարածական լուծումներին նվիրված ցուցադրական համալիրով: Միաժամանակ՝ անհրաժեշտ ենք համարում բացօթյա պահոցներում ստեղծել արդի պահանջներին ու չափանիշներին համապատասխանող պայմաններ, որոնք, անկասկած, կնպաստեն թանգարանային հավաքածուների ցուցադրությանը, հանրահռչակմանը, դրանք գիտական շրջանառության մեջ դնելուն:

**ДОРОГА К ХРАМУ: РАБОТА ПО ИДЕНТИФИКАЦИИ И УЧЕТУ
АРХИТЕКТУРНЫХ ОБЛОМКОВ ХРАМА ЗВАРТНОЦ
(Резюме)**

Ключевые слова: Звартноц, памятник, архитектурный фрагмент, идентификация, учет, популяризация.

Историко-культурный музей-заповедник “Звартноц”, занимающий территорию площадью 14,1 га, один из активно действующих центров культурного туризма. С 8-го июля 2004 г. в качестве филиала он вошел в состав ГНКО “Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников” МОНКС РА.

В архитектурный комплекс храма входят храм и светские сооружения (дворец католикоса, бытовые и хозяйственные помещения, баня, давяльня винограда, колодец). В юго-восточной части храмового комплекса сохранились остатки однефной церкви V в. (алтарное возвышение, баптистерий и т.д.). В 1937 г., высоко оценивая историко-архитектурный памятник, южнее храма, по соседству с руинами, был основан музей, в единственном зале которого до начала 90-х гг. XX в. экспонировалась небольшая экспозиция.

В 2012 г. в музее была осуществлена новая экспозиция. В данное время существует проблема сопоставимости тематического представления постоянной музейной экспозиции и выставки под открытым небом. В разные годы на территории памятника и в его окрестностях в процессе раскопок были обнаружены материалы погребений среднего (XXII-XV вв. до Р.Х.) и позднего (XV-XII вв. до Р.Х.) бронзового периодов, остатки материальной культуры античного периода (VI-III вв. до Р.Х.), средневековая керамика (IV-XIV вв. до Р.Х.), фрагменты мозаики, вписанный в окружность четырехкрылый рельефный крест, греческие и армянские лапидарные надписи, маскарон – декоративный рельеф в виде лица человека, бытовая и ритуальная посуда, предметы роскоши и т.д.

Исходя из требований охраны, целевого и перспективного развития этого исключительного в своем роде памятника, в 2002 г. были осуществлены исследование, обмер и паспортизация сохранившихся фрагментов храма Звартноц (руководитель авторской группы – архитектор Мери Даниелян, научный советник – архитектор, д.и.н. Тиран Марутян). В процессе работы

были обмерены и изучены 2023 пронумерованных архитектурных обломка и 30 обломков с линейными номерами. Всего: 2053 обломка. Составлены электронные паспорта, каждый из которых содержит характеристику обломка, беловик чертежа и фотографию.

В 2020 г. усилиями сотрудников ГНКО “Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников” началась (прервалась в результате пандемии) и в 2022 г. с 29 марта до 27-го мая на основании размещенных на электронном диске 2002 г. характеристик и фотографий продолжилась работа по изучению и учету архитектурных фрагментов. Рабочие группы идентифицировали и поставили на учет 1820 архитектурных обломков.

Целью доклада является популяризация экспонируемых на территории памятника под открытым небом и хранящихся в фондах музея исключительных архитектурных фрагментов. В процессе работы после полной идентификации, очистки и реставрации обломков появились требующие прояснения проблемы: подготовка отвечающей современным требованиям экспозиции, пополнение постоянной экспозиции музея и в то же время, считаем необходимым создание в открытых хранилищах условий, отвечающих современным требованиям и критериям, которые, несомненно, будут способствовать экспонированию музейной коллекции, ее популяризации, введение в научный обиход.

SAHAKYAN PIRUZA

SPHECMR,

Master, pirusiksahakyan@gmail.ru

**THE WAY TO THE TEMPLE:
IDENTIFICATION AND REGISTRATION OF ARCHITECTURAL
FRAGMENTS IN ZVARTNOTS
(Summary)**

Key words: *Zvartnots, monument, architectural fragment, identification, accounting, popularization.*

“Zvartnots” historical and cultural museum-reserve, which occupies an area of 14.1 hectares, is one of the centers of active cultural tourism. It has been a branch of the “Service for the protection of historical environment and cultural museum-reservations” SNCO, since July 8, 2004.

The complex consists of a cathedral and secular structures (catholicos

palace, utility rooms, baths, winepress and well). The remains of the one-nave church of the 5th century (altar, pool for christening, etc.) have also been preserved in the southeastern part of the temple complex. Appreciating the historical-architectural value of the temple, a museum was founded in 1937 on the southern side of the temple, near the ruins, which until the beginning of the 90s of the 20th century had a small exhibition summarized in one hall.

In 2012, a new exhibition was held in the museum. The permanent exhibition of “Zvartnots” historical-architectural museum-reserve has the problem of combining the methods of presentation of the theme in the museum and outdoor exhibition.

Tomb materials of the middle (the 22nd -15th cc. BC) and late (15th-12th cc. BC) bronze periods, of the antique era (the 6th-3rd centuries BC), remains of material culture, medieval (4th-14th cc.) pottery, remains of mosaics, four-pointed cross carved in a frame, Greek and Armenian inscriptions, human face sculpture, household, and ritual utensils, objects of luxury, etc. were found in the area of the monument from the excavations carried out in different years.

